5.	ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ PHILOLOGY ФИЛОЛОГИЧЕСКИЕ НАУКИ

ՄԵՍՐՈՊԻ ՀԱՅՏՆԱԲԵՐԱԾ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ՀՐԱՆՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ «ՄԵՍՐՈՊԸ» ՊԱՏՄՎԱԾՔՈՒՄ

ՀՏԴ 82-3
DOI: 10.56246/18294480-2025.18-20

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ
ԳՊՀ հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ,
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
էլփոստ՝ vachik-grigoryan@mail.ru
ԲԱԴՈՅԱՆ ԱՐՓԻՆԵ
ԳՊՀ շրջանավարտ, մագիստրոս
էլփոստ՝ badoyan.arpine@mail.ru

Հրանտ Մաթևոսյանի ստեղծագործության հոգևոր արժեքներից մեծագույնը, թերևս, մարդու խղճի, ժողովրդական խղճի գնահատումն ու արտահայտությունն է: Դա արդար աշխատանքի, ժողովրդի ու հողի մեծարման, ազնիվ նվիրումի դավանանքն է, բնության և մարդու կապերի ամրացման հայացքը, երկրի գաղափարախոսությունը իր մեջ կրելն է: Մեսրոպի մոտ ազգային պատմության հիշողությունը վերաճում է ազգային ինքնագիտակցության, հետևաբար նաև՝ մաքառման փիլիսոփայության: Կոնկրետ ժամանակային միավորի մեջ հերոսները հանդես են գալիս իբրև պատմություն, անցած ժամանակների բնական ժառանգորդներ: Ինչպես հերոսները, այնպես էլ ժամանակային միավորները անխառն չեն, նրանք միահյուսվում և արծածում են մի նոր իրողություն, նոր երևույթներ և նոր ընկալումներ: Ինչպիսին էլ լինի գրողի վիպական մտածողությունը, նրա հոգեբանականպատկերային կառուցվածքի համակարգը, այդ դավանանքով նա նժարում է մարդու սոցիալական-բարոյական նկարագիրը, դրա մեջ է տեսնում ցեղի, արմատների ամրության ու կենսունակության երաշխիքը: Այս առումով հոդվածում ուշադրություն ենք դարձրել Հրանտ Մաթևոսյանի «Մեսրոպ» պատմվածքի համանուն հերոսի խոհերի, աշխարհի ընկալումների, մարդկության և, առհասարակ, կյանքի վերաբերյալ, ցույց տվել նրա

ճշմարտացիությունը մի շարք հարցերում, որոնց քննությունն ու պարզաբանումը, առավել քան երբևէ, արդիական է և կարիք ունի անդրադարձի:

Բանալի բառեր՝ *Հրանտ Մաթևոսյան, «Մեսրոպ», Մեսրոպ, Լևոն, մեսրոպյան կենսափիլիսոփայություն, Ծմակուտ, հայոց պատմություն:*

Մարդուն դժվար է տարանջատել միջավայրից: Այստեղ միջանձնային հարաբերությունները ստանում են առաջնակարգ բնույթ: Իրենց ապրումների, մտքի եզրը «գծում» են հենց իրենք՝ հերոսները: Կերպարներ, որ նորություն են և նոր որակ, փոխադրվում են պատումից պատում, ստեղծում նոր աշխարհ:

Կեցությունը հոգեբանության ու բնավորության ձևավորման գործում առաջնային, որոշիչ դեր ունի: Օրինաչափորեն Մաթևոսյանը հենց կեցությունից է գնում դեպի անհատի հոգեբանության, ներաշխարհի բացահայտումները, ավելի ակնառու է դարձնում անձի սոցիալական հոգեբանությունը կեցության խորքային ըմբռնմամբ:

Մաթևոսյանի հերոսներն ընդգծված դիմագիծ ունեն ու դրանով իսկ իրենց հետ բերում են և համամարդկային որակներ: Այդ որակները կրողներից մեկը Մեսրոպի կերպարն է համանուն ստեղծագործության մեջ:

Մեսրոպը «շաղված մարդ էր: Հին հներում, Մեսրոպից առաջ, զրույցներում, դաշտեցիները հայ և Ղազարի Ավետը դաշտեցի էին սպանել»[1]: Հետո երեք դաշտեցի թուրքեր եկել և ջրաղացի ճանապարհի վրա սպանել էին Մեսրոպի հորը երեխայի աչքի առաջ: Նրանց կապը կտրվել էր, սակայն որոշ ժամանակ անց դաշտեցիները կարողանում են համոզել և ամռանը իրենց ոչխարները կրկին հանել սարերը: Հենց այդ ժամանակ էլ Մեսրոպը ցանկացել է վրեժխնդիր լինել, բայց կուսքարտուղար Լևոնը նրան բանտարկել էր տվել:

Ահա սրանք են Մեսրոպի կյանքի գլխավոր դեպքերը, որոնք մեծ ազդեցություն են թողել նրա խառնվածքի կազմավորման գործում: Սակայն Մեսրոպը չի սահմանափակվել այդ դեպքերի ազդեցության ոլորտում. նրան միշտ մտատանջել է «ինչու՞» հարցադրումը: Որոնումները նրան տարել են պատմության խորքերը, հանգեցրել ինքնատիպ եզրահանգումների:

Հայոց պատմության նշումները ոչ թե պատմական ժանյակներ են, այլ երկրի արմատների թափանցումներ: «Իսկ երբ այս ժամին դու կաս, նշանակում է՝ ունես և անցյալ, և ապագա»[2]:

---

[1] Հր. Մաթևոսյան, Ծառերը, Երևան, 1978, էջ 201:

[2] Հ. Համբարձումյան, Ոչ մի շաբաթ առանց Մաթևոսյանի, Երևան, 2021, էջ 64:

Նա «Հայոց պատմության սկիզբը մեկ քաշում տանում, չորս հազար տարվա խորքն էր իջեցնում, մեկ ծլեցնում էր երեկվա միջից, նայած այդօր ինչ վերաբերմունք ուներ մեզ հարևան ուրթին:

- Հայերին Լեոն է հնարել: Մինչև Լեոն, սուտ է, հայեր չեն եղել»[1]:

Այդ մարդիկ Մեսրոպի ասածներից ոչ՛ ուրախանում, ոչ՛ տխրում էին: Նրանք միայն գիտեին, որ իրենք գառնարած, հորթարած են, հնձվոր, կթվոր, խուզվոր են, ինչպես և իրենք իրենց մասին գիտեին հարևան ուրթի մարդիկ:

Բոլորն էլ հանդ ու սարի մարդիկ են, իրար հետ հարևանություն են անում, պատահում է՝ կռվում են, իրար գլուխ պատռում և նաև միասին նստում հացի: Նման դեպքերում Մեսրոպը պարզապես կատաղում էր:

«Մեր հոտը մի եզրով քսվում էր նրանց խոտհարքին, կամ նրանց հոտն էր կոխ տալիս մեր արոտը, և փետակռիվ էր լինում: Գլուխ էր ծակվում, թև էր ջարդվում, շապիկ էր ճղվում, նրանք մերոնց հայհոյում էին հայերեն՝ որպեսզի մեր սիրտը խառնի, և մերոնք նրանց թուրքերեն էին հայհոյում, շներն էին իրար հասնում և շնակույտ էր լինում և այլն: Հետո հացի էին նստում: Կենաց էին խմում և բարիացած զարմանում էին, թե ինչու է փաթաթված դիմացինի գլուխը, ճղված՝ շապիկը, վզից կախ՝ թևը: Կռվի մասին խոսք չէր լինում, և ասես թևները ջարդվել էր հաց ուտելիս: Ձիապանն իրիկունը թքոտում ու մերոնց ուշունց էր կապում:

- Էդ՝ կարոտել էիք, գնացել էիք մի քիչ ֆարսերե՞ն խոսեք: Էդ՝ իտալերեն էիր խոսում, զոռից գլուխդ ծակվեց, հա՞, Մուքելանց դատարկ: Տո՝ լի՛րբ եք, լի՛րբ, կնկա լիրբ եք, ով ձեռը մեկնում է՝ չէ ասել չունեք»:[2]

Մեսրոպը գիտի, որ յուրայինների՝ վաղվա օրվա նկատմամբ ունեցած անտարբերությունը, հարևանության և բարեկամության քծնախառը ժպիտով վարագուրված հոգու խեղճությունը իր ետևից պիտի բերի արհամարհանք և անդառնալի կորուստներ:

«Նախահանրապետական սովորույթների» վերականգնումը, ըստ Մեսրոպի, արոտների հայթայթումը իմաստավորվել է հարևան ուրթի մարդկանց հեռավոր օրերի ձգտումով: Մեսրոպն ասում է, որ թուրքերը չկային, քսան թվականին ստեղծվեցին ու երեսուն տարում ժողովուրդ դարձան. սոցիալիզմը ստեղծեց:

Մեսրոպը դատողությունների մեջ հասնում է ծայրահեղությունների զայրույթի պահերին, բայց այդ ծայրահեղությունները ճշտվում, ճշգրտվում են ինչպես պատմությամբ ու իր իսկ կենսափորձով, այնպես էլ հարևան ուրթի մարդկանց գործունեությամբ: Լինում էին վեճեր ու կռիվներ, փախցնում էին իրար հոտեր, սակայն մի կողմը միշտ ներողամիտ, մյուսը՝ համառ ու անզիջում: Եթե

---

[1] Հր. Մաթևոսյան, Ծառերը, Երևան, 1978, էջ 189:

[2] Նույնը՝ էջ 191:

առօրյա աշխատանքների մեջ հարևանությամբ ապրող տարբեր ուրթերի մարդիկ գրեթե նույնն էին, խորապես տարբեր էին վաղվա օրվա նկատմամբ ունեցած վերաբերմունքի մեջ:

«Մեր հովվից հոտն էնքան սիրուն էր խլել նրանց հանդապահը, որ մեր հովվի քեֆն ուղղակի եկել էր: Ասում է, եկավ ասավ ինչու՞ ես հանդն արել: Ասում է, ասի թող մի կուշտ արածի: Ասավ լավ: Թե՞ չարանում ես, ասի: Ասում է, կողքին նստել-նստել էր, մեկ էլ տպռուշ արել ու փախել ոչխարի միջով: Սպիտակ թաշկինակը գլխից վերև թափ էր տվել ու վազել դեպի իրենց գոմերը՝ անալի ջարդվող հոտը ետևից: Մեր հովիվն ասում էր. մեկ էլ տեսնեմ մոտս ոչխար չկա – ոչխարը ղռռալով ձորում գնում է թաշկինակի ետևից, ոչխարն աղ է ուզում: Տարել գոմն էր արել, կողպեքը դրել վրան, բանալին կոխել գրպանն ու գնացել իրենց մեծերի հետ արձանագրություն էին կազմել: Մերոնց վարիչն այստեղ հովիվների վրա էր գոռգոռում, հովիվները վարիչին էին մեղավոր հանում, թե նա ժամանակին աղ չի հասցրել ոչխարի համար...»[1]:

Մեսրոպը զարմանում ու զայրանում էր այդ մեծահոգի ներողամտությունից ու արհամարհանքի արժանի խեղճությունից: Նրանք իրենց անունները գրում էին ծառերին՝ կարծելով, որ ծառը իրենցից հետո իրենց անունը պահելու է դեռ երկար տարիներ: Սակայն գոմեշները գալիս և ոտնատակ էին անում այդ ամենը: Մեսրոպը դառնությամբ հասկանում է, որ մեր անունը ծառը չի հավերժացնելու իր մշտանորոգ կեղևի ծալքերում: Մեր անունը ծառից տաշելու են, տրորելու ցեխի մեջ, արհամարհանքով ջնջվելու և մոռացվելու է, ինչպես զարդանախշերը հարթեցված խաչքար, ավերված աղոթարան:

Մեսրոպը տեսնում ու ճանաչում է նրան, ում հետ կարելի է ու կարող է խոսել ու խոսում է իր կասկածների, իմացած-չիմացածի, մոռացած-շփոթածի մասին, վրա է բերում հեգնելով ու սիրաշահող ընկրկումով.

«- Այ տղա, մեր էս հայ ազգը վայ թե մի մե՛ծ սուտ է,- ասավ:

Եվ անցնելուց հետո՝

- Այսինքն էնքան էլ մեծ չի, եղած-չեղածն էս է հատել գնացել է՛»[2]:

Մեսրոպը խտանյութ է, որն իր մեջ ամբարել է դարերի հեռուն ու մի դարի խարանը՝ հայոց պատմություն պատմողի դերակատարումով:

Հրանտ Մաթևոսյանը ստեղծողի այն եզակիությունն ունի, ով չի դատում ու դատափետում անվերապահորեն, ով չի մեղադրում մեկին թուրք լինելու համար.

«Նա նրանց թուրք էր ասում, որպեսզի նրանք վիրավորվեն, բայց նրանք չէին վիրավորվում, որովհետև ամենևին էլ թուրքեր չէին: Նրանց զբաղմունքն այդ չէր, թրքությունը չէր նրանց զբաղմունքը, այլ, մերոնց նման, ոչխար պահելը,

---

[1] Նույն տեղում, էջ 193:

[2] Տե՛ս նույնը, էջ 196:

խուզելը, թրջվելը, չորանալը, անձրևին ու աշխարհին հայհոյելը: Եվ մերոնց մեծերը Մեսրոպին ասում էին:

- Դե լավ, էլի, ձենդ կտրիր»[1]:

Հեղինակը ոչ էլ գովաբանում է մյուսին հայ լինելու համար. «Սարի էն երեսին թշնամի չկա, թշնամին դու՛ք եք, ասաց, կկոտորեմ բոլորիդ, ասաց, ու հրացանը քաշեց: Ու հրացանը քաշած՝ թշնամի եք, ասաց, հայ չկա էս աշխարհում, ասաց աննամուս էիք ու աննամուս էլ կաք: Հայեր, իրոք, չկային: Կային միայն հովիվներ, որոնք թքոտեցին հեռացող Մեսրոպի ետևից, ասացին, որ լավ կլիներ նրան այնտեղ տային շանսատակ անեին»[2]:

Հենց միայն այս փոքր հատվածում արդեն հստակեցվում է Մեսրոպի՝ թշնամու պատկերացումը, որ բոլորովին էլ թուրքով չի սահմանափակվում, ինչպես և որոշակիանում է գրողի՝ ազգային ու մարդկային գաղափարաբանության իմացությունը:

Մեսրոպը հոգու աչքերով մեկի՝ լրջորեն բանավիճելու, իրեն տանջող հարցերը քննելու և պատասխաններ գտնելու փնտրտուքի մեջ է: Այդ մեկի բացակայությունը երբեմն նրան հանում է հավասարակշռությունից:

Հրանտ Մաթևոսյանը Մեսրոպի կերպարը դիտարկում է տարածական ու ժամանակային տարբեր չափումների մեջ: Կարող ենք ասել, որ նրա վարքագծի դրսևորումները հետևանք են մանկության տարիների սահմռկեցուցիչ դիպվածի, ապա երիտասարդ տարիների վիրավորական բախումների:

«Մաթևոսյանը հենց իր ոճի առանձնահատկությամբ մոտենում է գիտակցության հոսքի գրականությանը: Նա չի գրում դասական պատմելաձևին հատուկ սյուժետային ընդգծումով, այլ առանձին, աննշան թվացող մանրամասների միջոցով ստեղծում ու բացահայտում իր գյուղի մարդկանց կյանքն ու հոգեբանությունը: Մաթևոսյանի գիտակցությունը հոսում է. նրան չի բավարարում ներկան կամ անցյալը: Ներկայի ու անցյալի զուգորդման միջոցով Մաթևոսյանը պատկերում կամ երևակայության մեջ հայտնվում են նրա ապագա կյանքի որոշակի դրվագները: Այս ամենին Մաթևոսյանը հասնում է հիշողությունների, ներքին մենախոսությունների, վերհուշի և այլ գեղարվեստական միջոցների օգնությամբ, որոնք, առհասարակ, շատ բնորոշ էին գիտակցության հոսքի գրականությանը»[3]:

---

[1] Նույնը՝ էջ 191:

[2] Նույն տեղում, էջ 194:

[3] Հ. Սահակյան, Գիտակցության հոսքը և Հրանտ Մաթևոսյանի գրականությունը, Երևան, 2012, http://www.cultural.am/hy/norutyunner/hodvacner/507-gitakcutyan-hosqy-ev-hrant-matevosyani-grakanutyuny

Նա մեծանում է հոր սպանության պատմությունը գյուղի մեծերին ու հասակակիցներին անդադար ծայրից ծայր պատմելով: Չնայած Մեսրոպի ճակատագրի դառնությանը, անձնական վիրավորանքն ու վրիժառության զգացումը աստիճանաբար շաղախվում, տարրալուծվում են ժողովրդի ճակատագրի ու պատմության մեջ, բայց և այնպես նա մենակ է, և թվում է, թե Մեսրոպի գործողություններն էլ զարմանալի մի անտրամաբանությամբ նպաստում են իր իսկ պարտությանը:

Մեսրոպը համառորեն ուզում է Լևոնին հասկացնել իր գործողությունների անհրաժեշտ լինելը, բայց նրա մաքառումների ընդդիմադիր ուժն ավելի զորեղ է: Հերոսը այդ զորեղությանն ուզում է հակադրել պատմության իր իմացությունը, Լևոնին ասելով, որ թուրքերը կործանեցին Անին, բայց զուր են նրա թափած ջանքերը:

Երբ Մեսրոպը Հայոց պատմության ի՛ր պատմությունն էր պատմում, Հրանտ Մաթևոսյանը գրի մեջ ասում է. «Այս բոլոր բաները՝ Լեոն, Զարմայրը, քրիստոսի ծնունդից առաջը, Հովհաննես Թումանյանը՝ բոլորը ձիապանի տան կարասիներն էին, ուզածի պես դասավորում էր, և սարվորները մտածում էին, որ նա ձիապան չէր լինելու, երևաններում-բանում մի տեղ դասատու էր լինելու»[1]:

Իսկ երբ բանը հասնում է Գայլ Վահանին, «Եկան՝ ջարդեց, եկան՝ ջարդեց»-ն ավարտվում է. «Գայլ Վահան, չէ՞ մի, քաջ Նազար»[2]-ով կամ «էնքան ջարդեց՝ եղավ քաջ Նազար»-ով, որին ընդդիմանում է պատմող Հրանտ Մաթևոսյանը.

«-Գայլ Վահանը պատմական եղած անձնավորություն է, քաջ Նազարը հնարովի է:

- Դասատո՛ւդ գիտի,- դեպի մեր վրանը շուռ եկավ Մեսրոպը:
- Դասատուս ձիարած չի,- կանչեցի ես:
- Ձեռիդ ճար չկա՝ աղվան ես ասում,- կանչեցի ես,- նրանք աղվան չեն:
- Խեղճ մարդ եմ,- ասաց Մեսրոպը,- չգիտեմ նրանք ինչ են, բայց քու պապը նրանցում շատ մեծ հարգանք ուներ, շա՛տ»[3]:

Մեսրոպը պատմության մեջ է: Պատմությունը ընթացք է, որ կրկնություններ է հուշում: Հերոսի տագնապներին, մտորումներին ու մորմոքներին անհաղորդ է միջավայրը:

Նա երազում է աշխարհը տեսնել մաքուր ու անարատ, մարդկանց ու հարաբերությունները պարզ ու շիտակ: Սակայն օտարները և նրանց միացած յուրայինները ծիծաղում են նրա պարզամտության վրա:

---

[1] Հր. Մաթևոսյան, Ծառերը, Երևան, 1978, էջ 190:

[2] Նույնը՝ էջ 190:

[3] Տե՛ս նույնը, էջ 197:

Մեսրոպը «թողնում է երամից լքված, անջատված թռչունի տպավորություն, որ հուսահատ տառապանքով ուզում է դուրս գալ մայրուղի, բայց խճճվում է «երբեք էլ մայրուղի չհանող» արահետների մեջ»[1]:

«Նա մտել էր երբեք էլ մայրուղի չհանող մի արահետ, որ նրան տանում ու տանում, խորացնում ու խորացնում էր անտառի վայրենության մեջ՝ արջի ու հաճարենու, քարարծվի ու բվեճի, եղնիկի ու քամու աշխարհ: Այնտեղ ժայռերը ծերունու նման խոժոռվում են, արջը, իբր, ճղճղված կոճղով նվագում է չգիտես ինչ, կայծակները հրդեհում ու անձրևները մարում են կաղնիների հրդեհը»:[2]

Ու արջի հետ մենամարտած Մեսրոպը խոստովանում է. «- Վաթսուն տարի ապրել եմ ու թե մի բան եմ հասկացել՝ որսի օրը: Արջն ինչո՞ւ է ուժեղ, որովհետև արջը ծմակն է, ծմակի մի մասն է: Իր մի մասով ծմակը արջ է, դե հիմա գնա գտիր, թե որտեղ է ծմակը վերջանում ու սկսվում արջը: …

- Այսինքն սեփական ծմակ պիտի ունենաս: Լևոնն, օրինակ, ունի ու ուժեղ է: Ծմակ միայն ես չունեմ»[3]:

«Այս ինքնախոստովանանքը նույնքան ճշմարիտ է, որքան ճիշտ ու ճշմարտորեն համընկնում է ծմակ ունեցող Լևոնի՝ Մեսրոպի մասին ունեցած կարծիքին. «Լավ մարդ է, բայց իր օգուտն ու վնասը չի ջոկում, ձին քացի է տալիս նրան, եզը՝ հարու: Անխելք է, ձին պոզ չունի՝ կանգնիր առջևը, եզը քացի չունի՝ կանգնիր ետևը: Օրենք է, պիտի ենթարկվես»:

Սա է Հրանտ Մաթևոսյանի ֆենոմենը. նա կյանքի ու բնության օրենքները լավ գիտեր, բայց ենթարկվող չէր»[4]:

Մեսրոպի նպատակները չեն շրջափակվում առօրյա հակասություններով, դրանք ավելի մեծ են: Նրա ներքին պայքարը, աննահանջ մաքառումը հետապնդում է հաստատելու ցեղի գոյատևման անկապտելի իրավունքը, և հանուն դրա նա պատրաստ է մոռանալու անհատական բախտի ձախողումները, վրեժխնդրությունը: Մեսրոպը «քեն չունի իր անմիջական «հակառակորդի», «աչալուրջ», «զգոն», պատեհապաշտ Լևոնի դեմ,- գրում է Սուրեն Աղաբաբյանը,- այլև նրա հետ վարվում է համարյա այնպես, ինչպես կվարվեն բարեկամի հետ»[5]:

Այդ բարեկամ Լևոնը Մեսրոպին ձերբակալելու համար Կենտրոնից մարդիկ է կանչել: Մեսրոպի սեղանին դրված է Հայոց պատմությունը, աշխօրի գրանցման մի գրքույկ և մի շիշ օղի: Եկածները թուր են փնտրում, ինչը կարող է

---

[1] Կ. Աղաբեկյան, Հրանտ Մաթևոսյան. Ծմակուտի վիպասքը, Երևան, 1988, էջ 201:

[2] Հր. Մաթևոսյան, Ծառերը, Երևան, 1978, էջ 219:

[3] Տե՛ս նույնը, էջ 219:

[4] Դ. Համբարձումյան, Հրանտ Մաթևոսյանի ֆենոմենը, Երևան, 2014, http://cultural.am/hy/norutyunner/hodvacner/2285-hrant-matevosyani-fenomeny:

[5] Ս. Աղաբաբյան, Հոդվածներ, դիմանկարներ, հուշեր, Երևան, 1982, էջ 260:

լինել նրա՝ ժողովուրդների բարեկամության թշնամի լինելու իրեղեն ապացույց: Որքան էլ Մեսրոպը ունենա անմիջական վերաբերմունք մարդկանց նկատմամբ, որոշակի հարցերում ցուցաբերի միամտություն, այնուամենայնիվ, հայրենասիրության և թրի տարբերությունը շատ լավ է գիտակցում: Նրա համար հայրենասիրության մեջ մեղադրվելը առաքինություն է, իսկ թուրը Լևոնի բարեկամ ժողովուրդների բարեկամության գլխին շողացող զենք է:

«Հաճելի էր գիտակցել, որ երեկ Հոտած Նիկոլի կնոջ կողքերով վիզները ծռած վազողից իրենք դարձել են գաղափարակիրներ»[1], և հիմա գաղափարի իր հակառակությամբ հանդերձ Լևոնը փրկում է Մեսրոպին իշխող գաղափարակիրների մամլիչի տակ ճզմվելուց, թող որ՝ ժամանակավոր, թող որ՝ նախ ինքն իրեն փրկելով, թող որ՝ հետո Սիբիր ճանապարհելով, իսկ մինչ այդ՝ նացիոնալիզմի պարտադիր ատրիբուտ խանչալը Մեսրոպի իսկ ձեռքով «իրեղեն ապացույց դարձնելով», որպեսզի «Լևոնը շրջկենտրոնի առջև սևերես չմնար»[2]:

Եվ քանի որ «Մեսրոպը նրան լսում էր ականջը բերանին դեմ արած և շուտ-շուտ ասում էր՝ հա, այո, լավ, հա, այո: Լևոնն ուրեմն Մեսրոպին ասում էր. – Ամոթ է, կենտրոնից ասել են Ծմակուտ նացիոնալիզմ կա, հիմի մենք կենտրոնին ասենք չկա՞: Մարդիկ քաղաքից վեր են կացել եկել մեր դուռը, հիմի դատարկ ձեռքով ե՞տ ղրկենք»[3]:

Դրսից ծիծաղելի, իսկ ներսում ողբերգություն է, ինքնահայտնաբերման, ինքնաճանաչման լուռ ու անդուլ տառապանք: «Մեսրոպ» ստեղծագործության համանուն հերոսը մակերեսայնություն չէ, այլ կաթվածահար եղած հայոց հույսերի, երազների ու ձգտումների նույնքան կաթվածահար կերպարային դրսևորում:

Նա պարզապես խեղճ մարդ է, և այդ խեղճությունը նրա հոգում այնքան թանձր է նստած, որ նույնիսկ մի փոքր տեղ չի մնացել տղամարդկային ատելության համար: Հենց սա է նրա կռվարար, ամբարիշտ և դյուրագրգիռ լինելու պատճառը: Մեսրոպը ցանկանում է վրեժխնդիր լինել, բայց իր խեղճությունը իրեն հետ է մղում այդ ամենից և երևույթը դարձնում ողբերգական: Նրա ոչ թե քայլերն են տարել անտառ, այլ գոյության դրաման, հարատև բնական կիրքն ու ապրելու իրավունք նվաճելու ներքին մաքառումը:

«Քննադատ Վ. Կամյանովը գրում է. «Մեսրոպն իրեն համարյա թե հայկական նացիոնալիզմի սյուն է համարում»: Այս կարծիքը ճիշտ է, միայն թե

---

[1] Հր. Մաթևոսյան, Ծառերը, Երևան, 1978, էջ 211:

[2] Նույն տեղում, էջ 215:

[3] Տե՛ս նույնը, էջ 214:

«նացիոնալիստ» բառը ոչ մի կապ չունի ոչ իր բուն բառարանային իմաստի և, մանավանդ, ոչ էլ հերոսի հետ: Ծիծաղելին ու զայրացուցիչը հենց դա է»[1]:

Մաթևոսյանը հաճախակի է այդ բառը Մեսրոպի կողքին դնում, բայց նրա նպատակը Մեսրոպի համար այդ բառի բոլորովին այլ իմաստ ու նշանակություն ունենալը շեշտելն է:

Մեսրոպին մեղադրելու տարիներին «նացիոնալիստ» բառը ամենա-տարածվածն ու գործածականն էր: Վիպական մթնոլորտում այն դառնում է ոչ թե հերոսի, այլ ժամանակը և այդ նույն ժամանակի մեջ մարդկանց ունեցած հարաբերությունները բնութագրող նշան: Այդ բառն իր մեջ էր ներառում կորած եզերքների համար մարդկանց մեջ եղած լուսավոր կարոտները, անցյալի տխուր և հպարտ անցքերով համակվելը, Լեո կարդալը և այլն: Այս հանգամանքն էլ հրապուրում էր Մեսրոպին, և նա ուզում էր հերոսանալ:

«...Նրա ամբողջ կյանքը այդ կորսված անհատականության տանջալից որոնումն է եղել,- գրում է Լ. Մնացականյանը:- Մեսրոպի հոգում անընդհատ ծխացել է վրեժի անթեղը, բայց երբեք չի դարձել կրակ: Նա ինքն էլ չի հասկացել, թե ինչու: Միայն մի հեռավոր, անբացատրելի ձայն կանչել է նրան դեպի իր սկիզբը»[2]:

Արջը ծմակն է, ծմակը արջ է: Կյանքի մայրամուտին որդեգրված այս կենսափիլիսոփայության մեսրոպյան իրագործումը ինչքան էլ ինքնատիպ ու գեղեցիկ լինի, այնուամենայնիվ, անկարող է ամոքել այդ անհանգիստ մարդու վիրավոր ոգին: Նա գիտի իր անունը կրող ծառերի ճակատագիրը, գիտի իր պատրաստած բաժակների կյանքի տևողությունը:

Ծմակի նրա հայտնությունը պարուրված է բնական սկզբի վերագտնումի հույսով, սկիզբ, ուր շնչավորն ու անշունչը, որոտն ու շշուկը, գոյությունն ու զոհողությունը, հաղթանակն ու պարտությունը պայմանավորված են ներդաշ-նակության օրենքներով, ուր տեսակի կատարելագործման ու հարատևման նպատակը, չպարտվելու բնական կիրքը պարտադրում են անդուլ մաքառում:

Մաթևոսյանի հերոսին միջավայրը ոչ թե չի ընդունում, այլ նրա հարցերը թողնում է անպատասխան: Բայց հենց իր իսկ հարցադրումներին միջավայրի դրսևորած անտարբերությունն էլ դառնում է սրտամաշ տառապանք, զարմանք հարուցող զայրույթ:

Եթե «վախեցածությունը» ժամանակի մեջ կոնկրետ հարաբերությունների արտահայտություն է, ապա «հոգնածությունն» ու «հուսահատությունը» գալիս են հեռուներից, և հայ մարդու հոգեբանության մեջ ինչ-որ տեղ դարձել են որակ՝

---

[1] Կ. Աղաբեկյան, Հրանտ Մաթևոսյան. Ծմակուտի վիպասքը, Երևան, 1988, էջ 206:

[2] Լ. Մնացականյան, Կեցության սկիզբն ու խորհուրդը, Հայոց լեզու և գրականություն, Գիտ. աշխատ. միջբուհ. ժողովածու, պրակ 3-4, Երևան, 1984, էջ 50:

պայմանավորելով այն խեղճությունն ու հպարտության կորուստը, որ այնքան դառնություններ է պատճառել նրա ազատաբաղձ որդիներին, շարժել նրանց թե՛ զայրույթը, թե՛ կարեկցանքը:

Հայ մարդու համար գտնելը հույս էր, կորուստը՝ իրողություն և շարունակվող վտանգ: Մեսրոպը ոչ թե «պատմության դասերի հավելումներով շղարշում է կյանքի արմատական վերափոխումները», այլ առաջադրում է իր ունեցած տառապանքի բաղադրությունը և այդ տառապանքի ակունքը տեսնում նաև իր իսկ հայտնաբերած ծմակում, որտեղ իրար կողքի աճած երկու հաճարենի քամուց մաշում էին իրար, և մարդ դրանից ջղային էր դառնում:

«Մեսրոպի ապրումներն ու մտքերը,- գրում է Ս. Աղաբաբյանը,- կոչված են ԱՐԵՎԻ ՏԱԿ տեղ ունենալու, ամեն մեկին սահմանված ծմակ ունենալու և այդ ծմակում իր կյանքը հյուսելու դավանանքին»[1]:

Ընդհանրացնելով՝ կարող ենք ասել հետևյալը. «Մեսրոպ»-ը պատմվածքը ունի երկու խորք՝ ներման և մաքառման: Ներման շեշտը ընկնում է գյուղի ձիապան Մեսրոպի և կազմակերպիչ-ակտիվիստ Լևոնի միջադեպի վրա: Մեսրոպը վերադարձել է Սիբիրից՝ աքսորից, և Լևոնի հետ վարվում է բարեկամի պես, այնինչ Լևոնը բախտորոշ դեր ուներ այդ գործում: Մեսրոպի մոտ ազգային պատմության հիշողությունը վերաճում է ազգային ինքնագիտակցության, հետևաբար նաև՝ մաքառման փիլիսոփայության:

Հրանտ Մաթևոսյանի հերոսները հեռանում են իրենց նախատիպերից ոչ միայն ժամանակային նույն միավորի մեջ, այլ տարածքներում գոյություն ունեցող նմանատիպ երևույթների ընդհանրացմամբ, այլև տարբեր ժամանակների մեջ միահյուսված ու կայունացած հոգեբանությամբ: Կոնկրետ ժամանակային միավորի մեջ հերոսները հանդես են գալիս իբրև պատմություն, անցած ժամանակների բնական ժառանգորդներ: Ինչպես հերոսները, այնպես էլ ժամանակային միավորները անխառն չեն, նրանք միահյուսվում և արծածում են մի նոր իրողություն, նոր երևույթներ և նոր ընկալումներ:

«Աշխարհը չի փոխվել, աշխարհը կար այնպես, ինչպես եղել է: Փոխվել ենք մենք, փոխվել է աշխարհի մեր ընկալումը»[2]:

Օգտագործված գրականության ցանկ

1. Աղաբաբյան Ս., Հոդվածներ, դիմանկարներ, հուշեր, Երևան, 1982:
2. Աղաբեկյան Կ., Հրանտ Մաթևոսյան. Ծմակուտի վիպասքը, Երևան, 1988:

[1] Ս. Աղաբաբյան, Հոդվածներ, դիմանկարներ, հուշեր, Երևան, 1982, էջ 260:

[2] Յ. Հովականյան, Հոգեվերլուծական փիլիսոփայություն (Ֆրոյդ, Յունգ, Ֆրոմ), Երևան, 2001, էջ 18:

3. Գրիգորյան Վ., Հրանտ Մաթևոսյան. Ստեղծագործությունը, Երևան, 2013:
4. Համբարձումյան Դ., Հրանտ Մաթևոսյանի ֆենոմենը, Երևան, 2014, http://cultural.am/hy/norutyunner/hodvacner/2285-hrant-matevosyani-fenomeny:
5. Համբարձումյան Հ., Ոչ մի շաբաթ առանց Մաթևոսյանի, Երևան, 2021:
6. Հովականյան Յ., Հոգեվերլուծական փիլիսոփայություն (Ֆրոյդ, Յունգ, Ֆրոմ), Երևան, 2001:
7. Մաթևոսյան Հր., Ծառերը, Երևան, 1978:
8. Մնացականյան Լ., Կեցության սկիզբն ու խորհուրդը, Հայոց լեզու և գրականություն, Գիտ. աշխատ. միջբուհ. ժողովածու, պրակ 3-4, Երևան, 1984:
9. Սահակյան Հ., Գիտակցության հոսքը և Հրանտ Մաթևոսյանի գրականությունը, Երևան, 2012, http://www.cultural.am/hy/norutyunner/hodvacner/507-gitakcutyan-hosqy-ev-hrant-matevosyani-grakanutyuny

THE TRUTH REVEALED BY MESROP IN HRANT MATEVOSYAN'S STORY "MESROP"

GRIGORYAN VACHAGAN
Doctor of Philology, Professor
Head of the Chair of Armenian Language and Literature, lecturer, GSU
e-mail: vachik-grigoryan@mail.ru
BADOYAN ARPINE
Graduate of GSU, Master's degree
e-mail: badoyan.arpine@mail.ru

Perhaps the greatest spiritual value of Hrant Matevosyan's work is the evaluation and expression of human conscience and popular conscience. It is a creed of fair work, honoring both the people and the land, guided by honest devotion, dedicated to strengthening the bond between nature and humanity, and embodying the spirit of the nation's ideals. For Mesrop, the memory of national history grows into national self-awareness, and therefore also into a philosophy of purification. In a specific time unit, the characters act as history, the natural heirs of past times. Like the characters, time units are not isolated; they intertwine, giving rise to a new reality, new phenomena, and new perceptions. Whatever the writer's novelistic thinking, the system of psychological imagery, guided by that creed, shapes the social and moral

profile of the individual, which he sees as the foundation of the tribe's strength, vitality, and roots. In this regard, the article highlights the thoughts and perceptions of the eponymous hero from the author's story *Mesrop* concerning the world, humanity, and life as a whole, emphasizing his truthfulness on several issues whose examination and clarification are more relevant than ever and demand renewed attention.

Keywords: *Hrant Matevosyan, story "Mesrop", Mesrop, Levon, Mesropian biophilosophy, Tsmakut, Armenian history.*

ИСТИНА, ОТКРЫТАЯ МЕСРОПОМ В РАССКАЗЕ ГРАНТА МАТЕВОСЯНА «МЕСРОП»

ГРИГОРЯН ВАЧАГАН
Доктор филологических наук, профессор
Заведующий кафедрой армянского языка и литературы ГГУ
Преподаватель ГГУ
электронная почта: vachik-grigoryan@mail.ru
БАДОЯН АРПИНЕ
Выпускник ГГУ, степень магистра
электронная почта: badoyan.arpine@mail.ru

Одной из величайших духовных ценностей творчества Гранта Матевосяна, пожалуй, является проявление совести человека, народной совести и его оценка. Это исповедание справедливого труда, почитания народа и земли, честного служения, взгляд, направленный на укрепление связей между природой и человеком, несущий идеологию страны. Для Месропа память о национальной истории перерастает в национальное самосознание, а следовательно — и в философию борьбы. В рамках конкретного временного отрезка герои являются самой историей, выступают как естественные наследники прошлых времен. Как герои, так и временные единицы не однородны, они переплетаются и формируют новую реальность, новые явления и новые восприятия. Как бы ни мыслил писатель в жанре эпоса, какова бы ни была система его психологико-образной структуры, он с этим исповеданием оценивает социально-нравственный облик человека, в котором видит залог прочности и жизнеспособности народа, его корней.

В этом отношении в статье мы обратили внимание на размышления одноимённого героя рассказа Гранта Матевосяна «Месроп», на его восприятие

мира, человечества и жизни в целом, показали его правоту в ряде вопросов, обсуждение и прояснение которых сегодня особенно актуальны и требуют переосмысления.

Ключевые слова. *Грант Матевосян, «Месроп», Месроп, Левон, месропийская биофилософия, Цмакут, армянская история.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 29.11.2024թ.:
Հոդվածը գրախոսվել է 10.12.2024թ.:
Ընդունվել է տպագրության 25.04.2025թ.: